



33. ՄԻՍԱԿԻ ԽԵԶՆԹԸ

Մե թաքավոր ա հըլնում: Ծերացել էր, հըմա զավակ չուներ: Էս թաքավորը սովորութուն ուներ շորերը փոխա, էթա հիրա տերության սայմանները ման գա: Մե անքամ էլ, որ շորերը փոխուկ ման էր գալում հիր վնգրի խետ, ըտոնցը մոտցավ մե դարվեչ:

Թաքավորը տեսավ դարվեչը մոտնում ա, վազրին ասավ.—Վագի՛ր, դարվեչ բաբային մե ոսկի կրտաս:

Որ դարվեչը մոտցավ, վազիրը դարվեչին մե ոսկի տվեց, դարվեչն ասավ.—Ես ողորմութուն հավաքող դարվեչ չեմ, վագի՛ր, ես թաքավորի խետ կարևոր գործ ունեմ, ուզում եմ թաքավորի խետ խոսալ:

Վազիրն ասավ.—Դե գնա՛ թաքավորի մոտ, էլ էստեղ ի՞նչ ես անում: Էրեում ա, թաքավորը շատ նվեր կրտա:

—Ես արթեն թաքավորի մոտ եմ, վազի՛ր:

—Որտե՞ղ է թաքավորը,—ասաց վազիրը:

—Դարվեչի գննող աչկից ծպտվածը չի թաքնվի: Շորերն էլ փոխած թաքավորը մնում է թաքավոր:

Մոտենալով թաքավորին՝ դարվեչ բաբան ասավ.—Թաքավոր, ես եկել եմ քո դարդին դարման անելու, ուզում եմ քեզի ազատել էտ ծանդր դարդից:

—Ես երգրի տերն եմ,—ասավ թաքավորը,—ինչ դարդ բղի ունենամ, որ դու էլ դարման անես:

—Քո դարդն ամենքից շատ ա, թաքավոր, դու զավակ չունես, մտածում ես, թե ծերացել ես, քո մահից ետո ո՞րը բղի թաքավոր դառնա, երգիրը կառավարա:

Թաքավորը տեսավ, որ դարվեչը էտ էլ ա հիմանում, թաքցնելու բան չըկա, ասավ.—Դու ի՞նչ կանաս անի զավակի խըմար, ես վացցունխինգ տարեկան եմ, կնիկս վացցուն տարեկան ա:

Դարվեչն ասավ.—Թաքավոր, ես տալում եմ մե խնձոր, կրտանեք դու և թաքուհին կրճիսեք կուտեք, ինն ամիս ետո չեզի էրկու տղա գըլնի, էրկսից մեկը բղի ընձի տաս, թե համաձայն ե՞ս, խնձորը տամ:

Թաքավորը ծծղաց.— Դարվե՛չ, չոր քոթուկը որ տնգես, բա՞ր կըտա:

— Կըտա, տե՛ր իմ, կըտա, եթե դու համաձայնվես:

Թաքավորը մտածեց, որ ինչ կա, մե խնձոր չի՞, կըտանեմ կուտենք, գըլնի՛ գըլնի, չի հըլնի՛ ջնյնամ թե չի հըլնի:

Համաձայնվան, դարվեչը մե խնձոր տվեց, ասավ.— Տղերքը գըլնեն, անուն չըղնեք, չանքի ես գամ: Ես կըգամ, եփ ընձ ա հարմար, կըգամ իմ բաժինը կըտաս, քո տղին էլ անուն կըղնես: Դե, Թաքավո՛ր, ստորագրութո՛ւն տու, որ տղերքից մեկն ընձի կըտաս:

Վազիրը ստորագրութուն գրեց, Թաքավորը փեճատեց տվեց դարվեչին, դարվեչը գնաց:

Թաքավորը խնձորը տարավ, ճիսեց, Թաքուհու խետ ճերան, դարվեչի վրեն ծծղացին:

Խնձորն ուտելուց ետո հընցավ իրեք ամիս, Թաքուհին տենում ա, որ չէ, էրեխով ա, որ Թամավ ինն ամիսը, ինն օրը, Թաքուհին չօքը զանեց գետին, մե ջուխտ տղա բերեց: Ի՛նչ տղա, ամմեքը մե ազրայել:

Տղերքը դարցան տասներխինգ տարեկան, հըլն անուն չունին: Թաքավորը սպասում էր դարվեչի գալուն, խոսկ էր տվե:

Վազիրը մե օր ասավ.— Թաքավո՛ր, մե անխելք դարվեչ մե բան ասավ, դու էլ էրեխեքին անուն չես դնում: Դարվեչը ով գիղի եփ ա մեռե: Սաղ հըլներ, էս տասներխինգ տարի չէ՞ր գի, մեռեր ա, տեսար՝ փոծուկ խալիվոր էր:

Էնքան ասին, որ Թաքավորին համոզին էրեխեքին կնքեն, անուն դնեն:

Բերին, որ տղերքին կնքեն: Պաղրաստութուն տեսան, ուզում ին սկսեն, դարվեչն էկավ:

— Է՛, Թաքավո՛ր,— ասավ դարվեչը,— խոսկիտ տերը չես, խոսկ տվիր չըկնքես, արթեն սկսում ես:

Թաքավորն ասավ.— Դարվե՛չ բաբա, խոսկիս տերն եմ: Տղից բաժանվելը ծանդր ա, հըմա ի՞նչ էնեմ, տա՛ր:

Թաքավորը տղերքին հայտնեց գաղտնիքը: Մե տղեն ասավ, որ հինքը դարվեչի խետ չի էթա, դարվեչի տղա չի հըլնի:

Միշուս տղեն ասավ.— Հայրի՛կ, որ դու խոսկ ես տվե, ես քո խոսկը գետին չեմ քցի, կէթամ, թո ընձի տանա, անա հիրանը տղա, մեխկ ա, ծերացեր ա, տղա չունի, թո ուրխնա:

Դարվեչն ասավ.— Թաքավո՛ր, էս տղին տանում եմ, ես իմ տղի անունը դնում եմ Միսակ:

Տղի ձեռից բռնեց ու դուս էկավ: Թաքավորն էլ հիրա տղեն կնքեց, անունը դրեց Միսակ:

Քաղաքից դուռ էկան, թե չէ, դարվեչը Միսակի ձեռը թողեց, Հինքը Հանեչ գնաց։ Միսակը ծաղիկ քաղելով, երբ ասելով գնում էր դարվեչի Հետևից։ Գացին խասան մե ջեղ։ Մե պառավ տեսավ, լացավ։ Դարվեչը շատ զատն էր։

Պառավը Միսակին ասավ.—Քո խորը-մոր անկերը քոռանա, էս տեսակ տղին էլ կըտան մարթակեր դարվեչի՞ն։

—Ի՞նչ մարթակեր, նանե՛, —ասավ տղեն։

—Բալա՛ ջան, —ասավ պառավը, —էտ դարվեչը մարթ ա ուտում, էն էլ էրեխա, ջահելի միս ա ուտում։ էտ դարվեչը չեզի տանում ա, որ ուտա, կախարթ ա։ Արի չեզի մե խրատ տամ, իմ ասածը որ անես, սաղ կըմնաս, դարվեչից էլ կազատվես։

—Ասա՛, նանե՛ ջան, ասա՛, կըլսամ։

—Եփ կըխասնես դարվեչի տունը, ինչ որ չեզի կասա՛ արա՛, դու մի՛ արա, ասա՛. «Դարվեչ՛, ես թաքավորի տղա եմ, չեմ արե, դո՛ւ արա, ես տենամ»։ Վերջը դարվեչը մե ջոչ պղինձ կըղնա թունդրա վրեն, ջուրը կեոցնա, չեզի կասա. «Արի դազանը վերցա՛»։ Դու չըվերցես, ասա՛. «Արի դու վերցա՛, տենամ իմա՞լ ես վերցում»։ Հենց որ դարվեչը կըզա վերցելու, դու Հետևից ոտերը վերցո՛ւ, թո գլխի վրա հընգնի դազանը, խաչվի։ Դե գնա՛, բալա՛ ջան, Աստված քո խետ։ Վազի խասի՛ դերվիչին, թո չըտենա, որ իմ խետ խոսում ես, թե չէ կըսպանա, չի թողա տուն էլ խասնես։

Միսակը վազավ խասավ դարվեչին, գացին դարվեչի տունը։

Որ խասան տունը, դարվեչն ասավ.—Միսա՛կ ջան, փե՛տ բեր, թունդիրը վառա՛, ջո՛ւր բեր, դիր թո տաքնա՛, ճաչ էփենք, անոթի ենք։

—Պապի՛, ես թաքավորի տղա եմ, էտ տեսակ բաներ չեմ արե, չեմ տեսե, դո՛ւ արա, ես տենամ, ետո էլ ես կաննեմ։

Դարվեչը գնաց փետ բերեց, թունդիրը վառեց, ջուր տաքցուց, Միսակին ասավ.—Միսա՛կ ջան, ջուրը եռում ա, թունդրի վերվից վերցա՛։

Միսակն ասավ.—Պապի՛, ո՞նց վերցնեմ, մե անքամ դո՛ւ վերցու, ես տենամ, ետո ես կըվերցնեմ։

Կախարթ դարվեչն էկավ, դազանի կանթերից բռնեց, որ վերցնել սովըցնա, Միսակը Հետևից գոչտեց ու քցեց դազանը։ Ոտերից էլ բռնեց, բանցրցուց, որ չըկանա դգվի։ Կախարթ դարվեչը մեռավ։ Միսակը դազանից խանեց, մուրուսի մեջից մազերի խետ մե բալնիս հընգավ։ Վերցուց էտ բալնիսը, դռները բացեց։ Մտավ մե օթաղ, տեսավ լինքը ոսկի յա, մեկէլ օթաղը բացեց, տեսավ իրեք ձի, մեկը՝ կարմիր, մեկը՝ սև, մեկը՝ սիրտանկ։ Պոչներից մե դաստա մազ քաչեց, դրեց փափաղի մեջը, դուռ էկավ, մտավ մեկէլ օթաղը,

տեսավ մե տաշտ լինքը ոսկի ջուր: Գլոխն ու ճկուլթը թաթխեց ոսկեջրի մեջ, ճկուլթն էլ, գլխի մազերն էլ դարցան ոսկի: Ըստուց ետո դուս էկավ ու գնաց:

Գնաց, գնաց, խասավ մե չորանի, բարե տվեց ու խառցուց, թե վի՞ր ոխճարն ա, չորանն ասավ.—Բարո՞վ էկար, Միսա՛կ ջան, մեր ազատարար, էս ոխճարը էս մոտիկ ջեղի ոխճարն ա:

—Ի՞նչ ազատարար, ո՞ւմ մասին ա խոսկը:

—Դու ես մեր ազատարարը, քո էկած ճամբին, քո բլազին մատաղ: Մենք դարվեչի ձեռը կրակ ինք հընգե: Դու սպաներ էր դարվեչին ու մեզի ազատեր էր:

—Քիզի ո՞վ ասավ, որ ես դարվեչին սպանեցի, ես ոչ մե դարվեչ չեմ տեսե:

—Միսա՛կ ջան, մեր սարերում ծիտը չէր կանա թոնի, դուչը չէր կանա պտտա էնքան ժամանակ, քանի դարվեչը սաղ ա: Ծտերն սկսին ուրախ-ուրախ թովոալ, ծաղիկները գլխները բանցրցրին, դու էլ դարվեչի տնից ես գալում, ուրեմն դու սպանեցիր դարվեչին:

—Բա որտեղի՞ց հիմացար, որ իմ անունը Միսակ ա:

—էս ծտերը երգում են, Միսակին են առոխճութուն ցանգանում, ծտերից հիմացա քո անունը: Արի, Միսա՛կ ջան, նստի հանգստացի՛, կա՛թ ճեր, գառ մորթեմ, միս ճեր:

Միսակը նստավ կաթ ճերավ, հելավ, որ էթա, չորանն ասավ.—Միսա՛կ, բալա՛, էտենց մի՛ գնա: Երգիրը լինքն ա ավազակներով, չեզի վնաս կըտան: Մե չիչ սպասա՛, մե գառ մորթեմ, փորը արա՛ չեզի գլխարկ, դարցի չնչնալ, ճկուլթտ էլ կապա՛, նոր գնա՛, թո տենոզ չըլնի, չանքի խասնես տուն:

Չորանը գառը մորթեց, փորի կաշին մաքրեց, շինեց գլխարկ, Միսակի գլխին դրեց, դարցրեց չնչնալ, հերեսները պաչեց ու ասավ.—Դե, գնա՛ բարով:

Միսակը շարունակեց հիր ճանապարհը և խասավ մե քաղաք: Մտավ մե բաղ, տեսավ մարթ չըկա, գլխի կաշին խանեց, լվացվավ ու պարկավ թփի տակը քնավ:

էտ բաղը թաքավորի բաղն էր: Բաղվանչին էկավ, տեսավ մե չնչնալ պարկե ծաղիկների մեջ, ծառի խոփին քներ ա:

Մե քանի դըմսով տվեց, տղեն դարթնավ, ասավ.—Հընչե՞ս տփում, չեզի ի՞նչ եմ արե: Անտեր տղա եմ, թող մնամ ըստե, կաշխատեմ, հախ էլ չեմ ուզում:

Բաղվանչին համաձայնվավ ու տղեն մնաց ըստե:

էն վախտ, որ տղեն լվացվում էր, թաքավորի պստի ախճիկը ակուչկից տեսեր էր, էկավ ու բաղվանչուն ասավ.—Էլ էտ տղին

բան չասես, ոնչ էլ կըբանցնես, թո ըստե արբի, ոնց որ Հինքն ա ու-
զուսմ: Թաքավորի ախճիկը սիրահարվեր էր տղի վրա:

Բաղվանչին, որ գնաց, ախճիկն ասավ.—Ա՛յ տղա, անունտ ի՞նչ ա:
—Միսակ ա:

—Միսա՛կ, դու չնչնլ չես, հընչե՞ս գլխիտ փոստ քաշե:

—Ես չնչնլ եմ, թաքավորի՛ ախճիկ:

—Դու չնչնլ չես, ես ակուշկից տեսա, որ քո գլխի մազերը ոս-
կուց են: Այ ճկուլթու կապուկ ա, ճկուլթու էլա ոսկուց, ըստու խըմար
ես կապե:

—Ձէ՛, իմ ճկուլթը ոսկուց չի:

—Դե բա՛ց տենամ:

Տղեն ստիպված բացեց, թաքավորի ախճիկն ասավ.—Տեսա՞ր,
գաղտնիքտ ջիղում եմ:

—Միսա՛կ, կուզե՞ս, ես ու դու մարթ ու կնիկ դառնանք:

Միսակն ասավ՝ Համաձայն եմ:

Ըտուց ետո միշտ բաղի մեջ հիրար տենում ին:

էտ թաքավորի ախճիկները խասեր ին: Էկավ նշանելու վախտը:

Մեկը տվին վազրի տղին, մեկը տվին վաքլի տղին, պստի
ախճիկն էլ ասավ.—Ես մեր բաղի չնչնլին կառնեմ:

Քուրերը վրեն ծծղացին: Ախճիկը ձեն չարավ:

Էկավ խառնիսի օրը: Իշխանների տղերքը Էկան Հիրանց ձիե-
րով, որ մրցեն: Տղեն սև ձիան մազը տվեց կրակ: Սև ձինը Էկավ,
մտավ բաղը: Որ մրցուլթունը սկսվավ, Միսակը քոստը խանեց, մա-
տը հառցկեց, դամչեն վերցուց, թռավ ձիան քամակը: Հըմմեն մա-
ցին զարմացած, որ տեսան էտ Սև ձիավորին:

Միչնեկ ախճկան տանելու ժամանակ խեձավ կարմիր ձինը, էլի
չիմացան, թե ով ա: Մրցանակը տարավ Միսակը:

Վերչը թաքավորը ախճկան ասավ.—Ախճի՛կ ջան, քուրերտ
զացին, քո չնչնլի խառնիսը ե՞փ անենք:

Ախճիկն ասավ.—Հիրանը խառցո՛ւ:

Թաքավորը խառցեց չնչնլին:

Չնչնլն ասավ.—Եփ դու ցանգանում ես, թաքավո՛ր:

—Ուտոնսի ծախս ունե՞ս, թե իմ ծախսով ես պսակվում:

—Ինչքան ծախս ա պետք, թաքավո՛ր:

—Էրկու փուտ ոսկի:

—Էսօր կըստանաս:

Թաքավորը հընգավ մտքի տակ, թե էս չնչնլին ըրողո՞ւց ա ոս-
կի: Հիրկուն տղեն դարվեչի տնից իրեք փուտ ոսկի բերեց, տվեց
թաքավորին:

Նառնիսի օրը մրցութուն արին, փեսի վրեն ծծղացին, ասին՝
չնչն՛, դու էլ չե՞ս մրցում:

—Ո՞նց չէ,—ասավ չնչնը,—էս բոպեին:

Մազը տվեց կրակ, սիրտն էինն էկավ, խեճավ մտավ մրցման
մեջ, հըմա ոչ մեկի խաթրին չըկավ:

Ըտուց ետո Մխական հիր կնիկն առավ, էկավ խոր մոտ: Ներն ու
մերը շատ ուրխցան, դառցրին թաքավոր:

